Դաս 20. Հայաստանի ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթն ու կենցաղը, ավանդույթներն ու տոները

Մոլոկանների կենցաղը

Յուրաքանչյուր մոլոկանի տուն ունի բավականին ընդարձակ գավիթ, որտեղ գտնվում են բաղնիքը, ախոռը, խոտանոցը և շտեմարանը: Բնակարանը բաղկացած է երկու սենյակներից, որոնց դռները բացվում են նախասենյակների մեջ: Սենյակները հիմնականում քառանկյունի են լինում, եթե ոչ երեք, գոնե երկու կողմից երկուական կամ մի-մի պատուհաններով: Հատակն ու առաստաղը տախտակից են, բայց ոչ երբեք՝ ներկված: Սովորաբար սենյակներից մեկում լինում է երկար ռուսական փուռ, մյուս սենյակները տաքացվում են թիթեղյա վառարաններով: Սենյակի պատերին կից ձգվում են նեղ ու երկար նստարաններ, իսկ անկյուններում՝ փայտե պահարաններ, մի քանի նեղ և երկար նստարաններ մոտեցնելով կազմվում է մոլոկանի մահճակալը, սենյակի անկյունում սովորաբար դրված է լինում հասարակ փայտե սեղանը, որի վրա փոքրիկ հասարակ լամպ է լինում, կողքերին մի քանի աթոռ (կոչվում են տաբուրետկա), տան երկու կողմերում կան փոքր պատշգամբներ:

Տաուսե Մալաք: *Ամեն տարի ապրիլի 13-ին հաջորդող չորեքշաբթի ամբողջ աշխարհի եզդիները նշում են Նոր տարին: Եզդիները հավատում են, որ մի քանի հազար տարի առաջ այս օրը Տաուսե Մալաքը իջել է երկիր ու Ասրծո պատգամները տվել եզդիներին, այդ իսկ պատճառով չորեքշաբթին համարվում է սուրբ օր: Տոնին նախորդող երեքշաբթի օրը տանտիրուհին 1 հատ մեծ գաթա է թխում, որը կոչվում է*

Մալաքե Թաուս

կլոձ, և ևս 7 հատ փոքր գաթա, ինչը համապատասխանում է 7 հրեշտակներին կամ շաբաթվա 7 օրերին: Կլոձի մեջ դրվում է մի սև ուլունք: Կլոձը դնում ենք տան սրբատեղիում և թողնում մինչև առավոտ: Առավոտյան տան ավագը մի քանի սրբի անունով կտրում է գաթան և այն բաժանում ընտանիքի 13–14 տարեկանից բարձր անդամներին, և ում բաժին ընկնի ուլունքը, նա հաջողություն կունենա այդ տարում: Ավելի փոքրերին բաժին են տալիս 7 գաթաներից: Այնուհետև նրանք նախ այցելում են գերեզմանոցներ և առաջինը ննջեցյալներին են շնորհավորում, այնուհետև շնորհավորում են ողջերի տոնը: